

ՈՎ ՊԻԾԻ ԼԻՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒԴ

Էջմիածնի ալեւոր կամարները մի տարի թափուր մասլուց յետոյ վերջապէս իւր գիրկն առան նոր Հայրապետին. Հայկական ամբողջ կեանքը այն աստիճան քայլքայուած է ու այնպէս է շեղուել իւր կանոնաւոր ուղիից, որ նոր Հայրապետին մեծ կամքի ոյժ է պէտք և մեծ հանճար՝ ամեն մի կեանքի երևոյթին արձագանք տալու, բարւոքելու աղմկայոյդ կեանքը:

Շատ ցաւեր ունի Հայ ազգը և այդ ցաւերից գլխաւորը կը թական գործն է. Նոր Հայրապետը իւր ծրագրական ճառի մէջ ինքը շեշտեց այդ և մենք լիայոյս ենք, որ նա պիտի կարողանայ կրթական գործը դնել անհրաժեշտ բարձրութեան վրայ: Բայց կրթական գործ ասելով մենք հասկանում ենք ընդհանուր հայկական կրթութիւն. նախ քան ընդհանուրի դիմելը, մեր կարծիքով, անհրաժեշտ է նեցուկ տալ քանդուող շէնքին, որ մնացորդ բեկորները փլատակների չվերածուեն, ու իրենց տակը. Հթաղեն ամրող հայկական կրթական գործը:

Դպրոցական գործիչների ձերբակալումը մեր կեանքում վերշերս յաճախակի բնոյթ է սկսել կրել. առանձին աչքի են ընկնում Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի տեսուչ Ահարոնեանի և Էջմիածնի ճեմարանի՝ Մ. Բերբերեանի ձերբակալումը, որոնց մասին մենք առիթ ենք ունեցել մի քանի անգամ զրել: Այժմ, երբ հեռագիրը մեղ աւետեց որ ճեմարանի տեսուչ Բերբերեանը ազատ է ձերբակալութիւնից, մենք նորից դիմում ենք ճեմարանի տեսչի խնդրին:

Այս մութ մթնոլորտը, որը բնորոշում է այդ ճերբակալութիւնը, մենք մի կողմն ենք թողնում: Այժմ Հայրապետը առիթ ունի ինքն անձամբ տեսնել պ. Մին. Բերբերեանին և գնահատել նրա ուսուցչական, վարչական ու մանաւանդ տեսչական տաղանդը: Հայրապետը գիտէ նոյնպէս, որ ժամանակ է ազատել դըպրոցները «ուսեալ—տգէտ» վարիչներից, զուրկ գործունէութեան եռանդից և արժանի հատուցումը կտայ Բերբերեանի նման մի լուսամիտ մարդու, որի լուսամտութիւնը հանգիստ չի տալիս ոչ խաւարամիտ «ուութ» անձանց և ոչ «ուէտրոգրադ—սոցիալիստներին», որոնք զինուած ինտրիգի կեղառոտ զէնքով, անարժան ըրօշիւրային զրպարտութիւններով ու աշակերտական տհաս խլրտումներով արգելափիթ էլու հանդիսանում Բերբերեանին նրա շինարար գործունէութեան ժամանակի:

Բերբերեանն էր, որ կարողացաւ գէթ ժամանք (որովհետեւ կարճ էր ժամանակը և ուժեղ ինտրիգը) մաքրել Գէորգեան ճեմա-

ըանը, այդ ոռւսահայոց միակ բարձրագոյն դպրոցը կատարեալ տպիտութիւնից, որին ապացոյց կլինի Բերբերեանի զեկուցումը վերջին դէպքերի մասին վեհ. հայրապետին:

Թող գէթ այս անգամ ճեմարանում գերակշոի պայծառ լոյսը ու Հայրապետի առաջին քայլը այդ դժբաղդ դպրոցի վերաբերմամբ լինի մի այնպիսի որոշում, որը նաև կարդարացնի վեհափառի ծրագրական ճառը կրթական գործի վերաբերմամբ և ապա վեհի ապագայ ինքնուրոյն գործունէութեան նախակարապետը կլինի:

Իսկ գործունէութեան եռանդից զուրկ և Ակակի Ակակիկիչները թող մտնեն լնդմիշտ իրենց որջերը ու դադարեն ճեմարանի շէմքը անմիտ կերպով մաշելուց:

Վ. Ա.

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ինչպէս արդէն սպասւում էր, Ն. Վեհափառութիւն Տ. Մատթէոս Ակթողիկոսը լունիսի 14-ին ժամանեց Թիֆլիս:

Թիֆլիսի կարգադրիչ մասնաժողովի կողմից մի ամբողջ խումբ ընդառաջ էին գնացել Վեհին մինչև Աղստե կայարանը, իսկ Արքական թեմի պատգամաւոր Տ. Առաքելեանը մինչև Բաղաջարի:

Թիֆլիսի ընդունելութիւնը, շնորհիւ կաթողիկոսական ընդունելութեան կարգադրիչ մասնաժողովի եռանդուն գործունէութեան, բուն ժողովրդական էր և նախկին կաթողիկոսների ընդունելութեան հանդէսներից անհամեմատ շքեղ:

Երկաթուղու կայարանում խոնուած ահազին ամբոխ ժողովրդեան, արքայասենեակը զարդարուն և ալ մահուդ սփրուած գնացքի վալրից մինչև Հայրապետական կառքը: Արքայասենեկում խմբուած էին բաղմաթիւ հաստատութիւնների, հասարակութիւնների և խմբագրութեանց պատգամաւորութիւններ: Գնացքի առաջ սպասում էին քաղաքումս դտնուած կուսակրօններ, թեմական Ատենի ներկայացուցիչներ, քաղաքագլիսի պաշտօնակատարն ու իրաւասուներ, քաղաքիս հասարակութեան պատուաւոր ներկայացուցիչներ ևն ևն. կայարանում, ինչպէս և ամբողջ ճանապարհին և հանդիսին կարզը պահպա-